ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 24 >> մարտի 2014 թվականի N 53-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ, ԱՆՑԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 6 արձանագրային որոշման 2-րդ կետը.

Որոշում եմ.

1.Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից ծառայողական վկայականների տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից անցագրերի տրամադրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ծառայողական վկայականների և ծառայողական անցագրերի հաշվառման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից տրամադրվող ծառայողական վկայականների նկարագիրը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից տրամադրվող անցագրերի նկարագիրը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՖԵԼԻՔՍ ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝